01/10.1/7586-09
2009-11-03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Սամվել Նիկոյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ներքին շուկայի պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

AJV-45-06

Նախագիծ
Պ-725-28.09.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ներքին շուկայի պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. Ուժը կորցրած ճանաչել «Ներքին շուկայի պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-175 օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ներքին շուկայի պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Սույն օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է սահմանադրական բարեփոխումների արդյունքուում ՀՀ կառավարությանն օրենքի ուժ ունեցող որոշումների ընդունման լիազորության վերացման հետեւանքով «Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրաց ճանաչելու անհրաժեշտությամբ, որը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի. «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով։»